# ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

2021 թվականի 1-ին եռամսյակում իրականացված միջոցառումների ֆինանսական ցուցանիշների վերաբերյալ (աճողական)

<<Սևան>> ազգային պարկ>> ՊՈԱԿ

(հազար դրամ)

| Ծախսերի տնտեսագիտական դասակարգման հոդվածների անվանումը | Բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման N | Պետության կողմից տրվող հատկացումների հաշվին ստացվող եկամուտների և իրականացվող ծախսերի | | | Պարզաբանումներ և բացատրություններ ծախսման նպատակի վերաբերյալ |
|---|---|---|---|---|---|
| | | Հաստատված նախահաշվի ցուցանիշները | Փաստացի կատարողականը | Գերածախս կամ թերիրացում (փակագծերում գերածախս, դրական նշանով թերիրացում) | |
| 1 | 2 | 3 | 4 | 5=3-4 | 6 |
| **Ա. ՄԻՋՈՑՆԵՐԻ՝ ԴԻՏԱՐԿՎՈՂ ԺԱՄԱՆԱԿԱՀԱՏՎԱԾԻ ՍԿԶԲԻ ԱԶԱՏ ՄՆԱՑՈՐԴԸ** | | | | **0.0** | |
| **Բ. ԴԻՏԱՐԿՎՈՂ ԺԱՄԱՆԱԿԱՀԱՏՎԱԾՈՒՄ ՍՏԱՑՎՈՂ ԵԿԱՄՈՒՏՆԵՐ ԸՆԴԱՄԵՆԸ (տող1+տող2+տող3) այդ թվում՝** | | 303897.7 | 94097.7 | **209800.0** | |
| **1. Դրամաշնորհներ ընդամենը, որից՝** | | 303897.7 | 94097.7 | **209800.0** | |
| 1.1. Արտաքին պաշտոնական դրամաշնորհներ | | | | 0.0 | |
| 1.2.Դրամաշնորհներ Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից | | 303897.7 | 94097.7 | 209800.0 | Ֆինանսական միջոցների հատկացումը կատարվում է պայմանագրով սահմանված ժամանակացույցի համաձայն |
| **2. Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից ստացվող սուբսիդիաներ** | | | | **0.0** | |
| **3. Այլ եկամուտներ, որից՝** | | **0.0** | **0.0** | **0.0** | |
| 3.1. Կազմակերպության հաշվեկշռում հաշվառվող գույքի (բացառությամբ հողի) վարձակալությունից | | | | 0.0 | |
| 3.2. Կազմակերպության տնօրինմանը հանձնված հողի վարձակալությունից | | | | 0.0 | |
| 3.3.Եկամուտներ ապրանքների մատակարարումից և/կամ ծառայությունների մատուցումից ընդամենը, այդ թվում՝ | | **0.0** | **0.0** | **0.0** | |
| - ծառայությունների մատուցումից | | | | 0.0 | |
| - ապրանքների մատակարարումից կամ իրացումից | | | | 0.0 | |
| - այլ եկամուտներ | | | | 0.0 | |
| **Գ. ԸՆԴԱՄԵՆԸ ԵԿԱՄՈՒՏՆԵՐ (տող Ա+տող Բ)** | x | 303897.7 | 94097.7 | **209800.0** | |
| **Դ.ԸՆԴԱՄԵՆԸ ԾԱԽՍԵՐ (տող1+տող2+տող3)՝ այդ թվում՝** | x | 303897.7 | 94097.7 | **209800.0** | |
| **Դ1.Կազմակերպության աշխատողների ԱՇԽԱՏԱՎԱՐՁԸ՝ ԸՆԴԱՄԵՆԸ, այդ թվում՝** | x | 303897.7 | 94097.7 | **209800.0** | |
| **Դ1.1 Աշխատանքի վարձատրություն** | x | 303897.7 | 94097.7 | **209800.0** | |
| -Աշխատողների աշխատավարձեր և հավելավճարներ | 4111 | 303897.7 | 94097.7 | 209800.0 | |
| -Պարգևատրումներ, դրամական խրախուսումներ և հատուկ վճարներ | 4112 | 0.0 | | 0.0 | |
| **Դ2. Ծառայությունների և ապրանքների ձեռքբերում** | x | **0.0** | **0.0** | **0.0** | |
| **Դ2.1. Շարունակական ծախսեր** | | **0.0** | **0.0** | **0.0** | |
| -գործառնական և բանկային ծառայությունների ծախսեր | 4211 | 0.0 | | 0.0 | |
| -էներգետիկ ծառայություններ | 4212 | 0.0 | | 0.0 | |
| -Կոմունալ ծառայություններ | 4213 | 0.0 | | 0.0 | |
| -Կապի ծառայություններ | 4214 | 0.0 | | 0.0 | |
| -Ապահովագրական ծախսեր | 4215 | 0.0 | | 0.0 | |
| -Գույքի և սարքավորումների վարձակալություն | 4216 | 0.0 | | 0.0 | |
| -Այլ ծախսեր | 4217 | 0.0 | | 0.0 | |
| **Դ2.2 Գործուղումների և շրջագայության ծախսեր** | x | **0.0** | **0.0** | **0.0** | |
| -Ներքին գործուղումներ | 4221 | 0.0 | | 0.0 | |
| -Արտասահմանյան գործուղումների գծով ծախսեր | 4222 | 0.0 | | 0.0 | |
| -Այլ (գործուղման հետ կապված) տրանսպորտային ծախսեր | 4229 | 0.0 | | 0.0 | |
| **Դ2.3. Պայմանագրային ծառայությունների ձեռքբերում** | x | **0.0** | **0.0** | **0.0** | |
| -Վարչական ծառայություններ | 4231 | 0.0 | | 0.0 | |
| -Համակարգչային ծառայություններ | 4232 | 0.0 | | 0.0 | |
| -Աշխատակազմի մասնագիտական զարգացման ծառայություններ | 4233 | 0.0 | | 0.0 | |
| -Տեղեկատվական ծառայություններ | 4234 | 0.0 | | 0.0 | |
| -Կառավարչական ծառայություններ | 4235 | 0.0 | | 0.0 | |
| - Կենցաղային և հանրային սննդի ծառայություններ | 4236 | 0.0 | | 0.0 | |
| -Ներկայացուցչական ծախսեր | 4237 | 0.0 | | 0.0 | |
| -Ընդհանուր բնույթի այլ ծառայություններ | 4239 | 0.0 | | 0.0 | |
| **Դ2.4. Այլ մասնագիտական ծառայությունների ձեռք բերում** | x | **0.0** | **0.0** | **0.0** | |
| -Մասնագիտական ծառայություններ | 4241 | | | | |
| **Դ2.5. Ընթացիկ նորոգում և պահպանում (ծառայություններ և նյութեր)** | x | **0.0** | **0.0** | **0.0** | |
| -Շենքերի և կառույցների ընթացիկ նորոգում և պահպանում | 4251 | 0.0 | | 0.0 | |
| -Մեքենաների և սարքավորումների ընթացիկ նորոգում և պահպանում | 4252 | 0.0 | | 0.0 | |
| **Դ2.6. Նյութեր** | x | **0.0** | **0.0** | **0.0** | |
| -Գրասենյակային նյութեր և հագուստ | 4261 | 0.0 | | 0.0 | |
| -Գյուղատնտեսական ապրանքներ | 4262 | 0.0 | | 0.0 | |
| -Վերապատրաստման և ուսուցման նյութեր | 4263 | 0.0 | | 0.0 | |
| -Տրանսպորտային նյութեր | 4264 | 0.0 | | 0.0 | |
| -Շրջակա միջավայրի պաշտպանության և գիտական նյութեր | 4265 | 0.0 | | 0.0 | |
| -Առողջապահական և լաբորատոր նյութեր | 4266 | 0.0 | | 0.0 | |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| -Կենցաղային և հանրային սննդի նյութեր | 4267 | 0.0 | | 0.0 | |
| -Հատուկ նպատակային այլ նյութեր | 4269 | 0.0 | | 0.0 | |
| **Դ3. ԱՅԼ ԾԱԽՍԵՐ** | x | **0.0** | **0.0** | **0.0** | |
| **Դ3.1 Նվիրատվություններ ոչ կառավարչական (հասարարակական) կազմակերպություններին** | x | **0.0** | | **0.0** | |
| **Դ3.2 Բյուջեներ կատարվող վճարումներ** | x | **0.0** | **0.0** | **0.0** | |
| **Դ3.2.1.Հայաստանի Հանրապետության պետական բյուջե** այդ թվում | | 0.0 | 0.0 | 0.0 | |
| ***-Հարկեր ընդամենը, այդ թվում՝*** | 4822 | ***0.0*** | ***0.0*** | ***0.0*** | |
| ԱԱՀ | x | 0.0 | | 0.0 | |
| Շահութահարկ | x | 0.0 | | 0.0 | |
| Բնօգտագործման վճար | x | 0.0 | | 0.0 | |
| Այլ հարկեր (նշել տեսակը) | x | 0.0 | | 0.0 | |
| ***-Պարտադիր վճարներ, ընդամենը, այդ թվում՝*** | 4823 | ***0.0*** | ***0.0*** | ***0.0*** | |
| Ավտոմեքենաների տեխզննում | | 0.0 | | 0.0 | |
| Պետ. Տուրք | | 0.0 | | 0.0 | |
| նշել ըստ տեսակների | | 0.0 | | 0.0 | |
| **Դ3.2.2.Համայնքների բյուջեներ** | | 0.0 | 0.0 | 0.0 | |
| ***-Հարկեր ընդամենը, այդ թվում՝*** | 4822 | ***0.0*** | ***0.0*** | ***0.0*** | |
| Գույքահարկ | x | 0.0 | | 0.0 | |
| Հողի հարկ | x | 0.0 | | 0.0 | |
| նշել ըստ տեսակների | x | 0.0 | | 0.0 | |
| ***-Պարտադիր վճարներ, ընդամենը, այդ թվում՝*** | 4823 | ***0.0*** | ***0.0*** | ***0.0*** | |
| Կարճակայական պայմանագրերից մասհանում 30% | x | 0.0 | | 0.0 | |
| նշել ըստ տեսակների | x | 0.0 | | 0.0 | |
| նշել ըստ տեսակների | x | 0.0 | | 0.0 | |
| **Դ3.3 Դատարանների կողմից նշանակված տույժեր և տուգանքներ** | x | **0.0** | **0.0** | **0.0** | |
| -Դատարանների կողմից նշանակված տույժեր և տուգանքներ | 4831 | 0.0 | | 0.0 | |
| **Դ3.4. ԱՅԼ ԾԱԽՍԵՐ** | **4861** | **0.0** | **0.0** | **0.0** | |
| Գիտական ուսումնասիրություններ | x | | | 0.0 | |
| Անտառվերականգման աշխատանքներ | x | 0.0 | | 0.0 | |
| նշել ըստ տեսակների | x | 0.0 | | 0.0 | |
| նշել ըստ տեսակների | x | 0.0 | | 0.0 | |
| նշել ըստ տեսակների | x | 0.0 | | 0.0 | |
| նշել ըստ տեսակների | x | 0.0 | | 0.0 | |
| նշել ըստ տեսակների | x | 0.0 | | 0.0 | |
| նշել ըստ տեսակների | x | 0.0 | | 0.0 | |
| նշել ըստ տեսակների | x | 0.0 | | 0.0 | |
| նշել ըստ տեսակների | x | 0.0 | | 0.0 | |
| **Ե. ԸՆԴԱՄԵՆԸ ԴՐԱՄԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՀԱՎԵԼՈՒՐԴ (ՊԱԿԱՍՈՒՐԴ) ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԻՑ (տող9 -տող7)** | | **0.0** | **0.0** | **0.0** | |
| **Զ. ՉՈՒՏ ԴՐԱՄԱԿԱՆ ՀՈՍՔԵՐ ՈՉ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱԿՏԻՎՆԵՐՈՒՄ ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐԻՑ (տող Զ2 - տող Զ1)** | | **0.0** | **0.0** | **0.0** | |
| **Զ1.Կապիտալ ակտիվների ձեռքբերում այդ թվում՝** | x | **0.0** | **0.0** | **0.0** | |
| **Զ1.1.ՀԻՄՆԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ** | x | **0.0** | **0.0** | **0.0** | |
| -Շենքերի և շինությունների ձեռք բերում | 5111 | 0.0 | | 0.0 | |
| -Շենքերի և շինությունների կառուցում | 5112 | 0.0 | | 0.0 | |
| -Շենքերի և շինությունների կապիտալ վերանորոգում | 5113 | 0.0 | | 0.0 | |
| -Տրանսպորտային սարքավորումներ | 5121 | 0.0 | | 0.0 | |
| -Վարչական սարքավորումներ | 5122 | 0.0 | | 0.0 | |
| -Այլ մեքենաներ և սարքավորումներ | 5129 | 0.0 | | 0.0 | |
| -Անեզվող ակտիվներ | 5131 | 0.0 | | 0.0 | |
| -Ոչ նյութական հիմնական միջոցներ | 5132 | 0.0 | | 0.0 | |
| -Գեոդեզիական-քարտեզագրական ծախսեր | 5133 | 0.0 | | 0.0 | |
| -Նախագծանախահաշվային աշխատանքներ | 5134 | 0.0 | | 0.0 | |
| **Զ1.2. ՈՉ ԱՐՏԱԴՐԱԿԱՆ ԱԿՏԻՎՆԵՐ** | x | **0.0** | **0.0** | **0.0** | |
| -Հող | 5411 | 0.0 | | 0.0 | |
| -Ընդերքային ակտիվներ | 5421 | 0.0 | | 0.0 | |
| -Այլ բնական ծագում ունեցող ակտիվներ | 5431 | 0.0 | | 0.0 | |
| -Ոչ նյութական ոչ արտադրական ակտիվներ | 5441 | 0.0 | | 0.0 | |
| **Զ2.Կապիտալ ակտիվների վաճառքից մուտքեր** | x | **0.0** | | **0.0** | |
| **Է. ԸՆԴԱՄԵՆԸ ԴՐԱՄԱԿԱՆ ՀԱՎԵԼՈՒՐԴ (ՊԱԿԱՍՈՒՐԴ) (տող Ե + տող Զ)** | x | **0.0** | **0.0** | **0.0** | |

Տնօրենի ժ/պ _____
(ստորագրություն)

<<Ստաֆ Պլյուս>> Խորհրդատվական ՍՊԸ _____ Գ. Սանդրյան
(ստորագրություն)

**«01» փետրվարի 2021թ. կնքված N ՇՄՆ-ԴՇ-21/03 պայմանագրի «Սևան Ազգային Պարկ» ՊՈԱԿ-ի «Պահպանության, գիտական ուսումնասիրությունների, անտառտնտեսական աշխատանքների կատարման ծառայություններ» ծրագրի շրջանակում 2021թ.-ին իրականացված միջոցառումների մասին**

| NN | Իրականացված միջոցառումներ | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | Անվանումը | Համառոտ բովանդակությունը | Կատարված գործառույթների նկարագիրը | Ակնկալվող արդյունքները և դրանց գնահատման չափանիշները | Վերջնաժամկետը | Պահանջվող գումարը (հազ. դրամ) |
| 1 | «Սևան» ազգային պարկի պահպանություն | Ազգային պարկի տարածքում պահպանության ընդհանուր միջոցառումների իրականացում, պահաբաժիններում գարնանային և աշնանային հերթական և վերստուգիչ ստուգումներ, պարկի բնական էկոհամակարգերի լանդշաֆտային ու կենսաբանական բազմազանության, բնական տեսակների գենոֆոնդի, բնության ժառանգության, պահպանություն, պաշտպանություն ազգային պարկի ամբողջ տարածքում | - Մասնաճյուղերի կողմից պահաբաժիններում գարնանային և աշնանային հերթական և վերստուգիչ ստուգումների իրականացում,<br>- Պահպանության ծառայություններ աշխատակիցների կողմից պարկի տարածքի արգելոցների և արգելավայրերի տարածքներում ստուգումների և շուրջօրյա հերթապահությունների միջոցով,<br>- «Սևան» ազգային պարկի տարածքին սահմանակից համայնքների բնակչության շրջանում բացատրական աշխատանքների իրականացում | - Պատշաճ պահպանություն,<br>- հանրության իրազեկում «Սևան» ազգային պարկի հարակից 41 համայնքներում,<br>- ապօրինի ձկնորսության և խեցգետնի ապօրինի որսի, ապօրինի շինարարության, ռելիեֆի խախտման, ապօրինի ծառահատման, ապօրինի աղբաթափման, ապօրինի արածեցման և այլ իրավախախտումների բացառում: | 31.12.2021թ | 84 431,3 |
| 2 | Պարկի տարածքում գիտական հետազոտություններ | Աշխատանքային պլաններով նախատեսված գիտական հետազոտությունների իրականացում,<br><br>հարող բնակավայրերի բնակչության շրջաններում էկոլոգիական իրազեկություն, էկոդաստիարակութուն, | Գիտության և մոնիթորինգի բաժնի աշխատակիցների կողմից աշխատանքային պլաններով նախատեսված գիտական հետազոտությունների իրականացում.<br>- Մեծ Սևանում, Փոքր Սևանում, Սևանա լիճ թափվող Դրախտիկ, Ձկնագետ, Գավառագետ, Ծակքար, Մասրիկ, Արգիճի, Լիճք, Վարդենիկ, Մարտունի գետերի ջրերի որակի ուսումնասիրություն, մանրէաբանական, հիդրոքիմիական և հիդրոֆիզիկական հետազոտությունների իրականացում,<br>- ձկան և խեցգետնի պոպուլյացիաների ուսումնասիրություն Մեծ Սևանում և Փոքր Սևանում,<br>- «Սևան» ազգային պարկի տարածքին սահմանակից համայնքների բնակչության շրջանում բացատրական աշխատանքների իրականացում, Այցելուների կենտրոնի և տարածքի այցելուներին տեղեկատվության տրամադրում,<br>-էկոհամակարգերի և դրանց բաղադրիչների գույքագրում, հաշվառում և մոնիթորինգ: | - Սևանա լիճ թափվող գետերի և Սևանա լճի ջրի որակի վերաբերյալ արդյունքների վերլուծություն,<br>- ձկների կենսաբանական ցուցանիշների, դրանց տարածական տեղաբաշխման և կենսապայմանների, խեցգետնի վերարտադրման առանձնահատկությունների, պոպուլյացիաների չափատարիքային և սեռական կառուցվածքի, բազմացման ժամանակաշրջանների, բեղունության ցուցանիշների վերլուծություն,<br>- «Սևան» ազգային պարկի տարածքին սահմանակից 41 համայնքների բնակիչների էկոլոգիական իրազեկվածության մակարդակի բարձրացում,<br>- գիտական ուսումնասիրությունների և մոնիթորինգի իրականացման ընթացքում ստացված տվյալների հավաքագրում, դասակարգում, տարածքների և բնական պաշարների օգտագործման հաշվառում, ամփոփում և վերլուծություն: | 31.12.2021թ | 5 671,5 |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| 3 | Պարկի տարածքում անտառտնտեսական աշխատանքներ | Անտառագիտական և անտառտնտեսական միջոցառումների, անտառվերականգնողական և անտառտնկման աշխատանքներ | Մասնաճյուղերի կողմից անհրաժեշտությամբ պայմանավորված անտառագիտական և անտառտնտեսական միջոցառումներ, սանիտարական հատումներ և խնամքի աշխատանքներ: | Տնկարկների խնամք և անտառվերականգնողական աշխատանքներ՝ ըստ անհրաժեշտության և կարիքից ելնելով: | 31.12.2021թ | 4 012,9 |
| | | | | ԸՆԴԱՄԵՆԸ | | 94 097,7 |

«Սևան Ազգային Պարկ» ՊՈԱԿ տնօրենի ժ/պ _____ Ա.Աբելյան

**2021թ. առաջին եռամսյակի**

**«Սևան» ազգային պարկ» ՊՈԱԿ-ի**

**կողմից կատարված աշխատանքների**

# Հաշվետվություն

1. **«Սևան» ազգային պարկի պահպանություն.**

**Պահպանության ծառայություններ, աշխատակիցների կողմից պարկի տարածքի արգելոցների և արգելավայրերի տարածքներում ստուգումների և շուրջօրյա հերթապահությունների միջոցով.**

«Սևան» ազգային պարկ» ՊՈԱԿ-ի պահպանության բաժնի աշխատակիցների կողմից իրականացվել է ամենօրյա հսկողություն՝ անտառային օրենսդրության խախտումների և այլ բնապահպանական խախտումների կանխարգելման, հայտնաբերման ուղղությամբ:

2021 թվականի առաջին եռամսյակի ընթացքում արձանագրվել է 11 բնապահպանական խախտման դեպք, որից 9-ը՝ ապօրինի ծառահատման, 2-ը՝ ապօրինի ձկնորսության: Առգրավվել է 44 ձկնորսական պոլիէթիլային ցանց: Արձանագրված ապօրինի ծառահատման 9 դեպքերի վերաբերյալ մանրամասները ստորև աղյուսակի տեսքով ներկայացվում է.

| N | Ամիս ամսաթիվ | Մասնաճյուղ | Տեղամաս | Պահաբաժին քառակուսի | Հատված ծառերի քանակը | Հատված ծառերի տեսակը | Հատված ծառերի տրամագիծը | Ծավալը |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| 1 | 08.01.2021թ. | Վարդենիս | Ծովակ | 4-րդ պահ. | 4 հատ | Բարդի | 1-32 սմ<br>1-34 սմ<br>1-28 սմ<br>1-30 սմ | 2.252 |
| 2 | 15.01.2021թ. | Մարտունի | Ծովինար | 44-րդ քառ. | 12 հատ | Բարդի | 2-10 սմ<br>4-12 սմ<br>2-14 սմ<br>2-18 սմ<br>1-26 սմ<br>1-34 սմ | 1.548 |
| 3 | 04.02.2021 թ. | Մարտունի | Երանոս | 5-րդ պահ.<br>42 քառ. | 19 հատ | Հացենի | 2-10 սմ<br>1-12 սմ<br>4-14 սմ<br>7-16 սմ<br>3-18 սմ<br>1-20 սմ<br>1-22 սմ | 2.131 |
| 4 | 10.02.2021 թ. | Վարդենիս | Ծովակ | 4-րդ պահ. | 2 հատ | Բարդի | 1-24 սմ<br>1-70 սմ | 3.072 |
| 5 | 10.02.2021 թ. | Վարդենիս | Ծովակ | 4-րդ պահ. | 2 հատ | Բարդի | 1-24 սմ<br>1-48 սմ | 2.026 |
| 6 | 11.02.2021 թ. | Նորատուս | Այրիվան | 36-րդ քառ. | 10 հատ | Թեղի | 2-18 սմ<br>2-12 սմ<br>2-16սմ<br>2-8 սմ<br>1-14 սմ<br>1-20 սմ | 0.87 |
| 7 | 22.02.2021թ. | Վարդենիս | Ծովակ | 4-րդ պահ. | 13 հատ | Բարդի | 6-18 սմ<br>1-22 սմ<br>1-24 սմ<br>1-34 սմ<br>1-16 սմ<br>1-26 սմ | 4.473 |

| | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | | | | 1-30 սմ<br>1-48 սմ | |
| 8 | 22.02.2021թ. | Վարդենիս | Փամբակ | 1-ին պահ.<br>7-րդ քառ. | 5 հատ | Սոճի | 1-30սմ<br>1-26սմ<br>1-18 սմ<br>1-20 սմ | 1.513 |
| 9 | 25.03.2021թ. | Վարդենիս | Վարդենիս | 5-րդ պահ. | 8 հատ բներ | Ուռենի | 4-8 սմ<br>3-10 սմ<br>1-14 սմ | 0.136 |

Հայտնաբերված բոլոր իրավախախտումների վերաբերյալ կազմվել են արձանագրություններ և ուղարկվել են իրավասու մարմիններին՝ համապատասխան ընթացք տալու, իրավախախտողին հայտնաբերելու և պատասխանատվության ենթարկելու համար:

«Սևան» ազգային պարկի տարածքներում գարնանային հերթական և վերահսկիչ ստուգումները ՊՈԱԿ-ի տնօրենի համապատասխան հրամանով կսկսվեն ապրիլ-մայիս ամիսներին: Ստուգումների արդյունքները կներկայացվեն շրջակա միջավայրի նախարարություն:

**Սևանա լճի ափամերձ տարածքներում գտնվող, 1901.5 մետր նիշից ներքև ապօրինի կառուցված շենք-շինությունների ապամոնտաժման աշխատանքներ.**

2021թ. փետրվար ամսին ՊՈԱԿ-ի աշխատակիցների կողմից իրականացվել են Սևանի հանրային լողափից դեպի թերակղզի ընկած ափամերձ և Սևանի նավամատույցի հարևանությամբ, 1901.5 մետր նիշից ներքև գտնվող, լճափնյա հատվածների հետևյալ շենք-շինությունների (պարիսպներ, կիսակառույց շինություններ) ապամոնտաժման աշխատանքները.

ա) լճի մեջ գտնվող 2 քարե պարիսպներ՝ 50գ/մ երկարությամբ և 3մ բարձրությամբ,

բ) նավահանգստի հարակից տարածքում 240գ/մ և 3մ բարձրությամբ պարիսպ և 2 շինություն՝ 308 և 84մ$^2$ 4,4մ բարձրությամբ,

գ) 9 վագոն տնակներ, որոնցից 8-ն արդեն ապամոնատժվել են, 9-րդ վագոն տնակի ապամոնտաժման աշխատանքներն ընթացքի մեջ են,

դ) պարիսպ՝ 200գ/մ 3 մ բարձրությամբ, որի ներսում առկա են 50 մ$^2$, 65 մ$^2$, 63,7 մ$^2$ մակերեսներով և 4,4մ բարձրությամբ 3 շենք: Պարսպի և շինությունների մի մասը քանդվել է, մի մասի քանդման աշխատանքներն ընթացքի մեջ են,

ե) լճի մեջ առկա 30մ երկարությամբ և 2 մ բարձրությամբ պարիսպներ:

- **«Սևան» ազգային պարկի տարածքին սահմանակից համայնքների բնակչության շրջանում բացատրական աշխատանքների իրականացում, այցելուների կենտրոնի և տարածքի այցելուներին տեղեկատվության տրամադրում**

Սևանա լճին հարակից համայնքների բնակչության հետ քննարկվել է մարդ-բնություն փոխհարաբերությունների արդի հիմնահարցերը, մարդու բացասական ազդեցությունը էկոհամակարգերի վրա բնության նկատմամբ ոչ պատշաճ վերաբերմունքի հետևանքով: Քննարկվել է էկոլոգիական մտածողության զարգացման

կարևորությունը, ինչպես նաև էկոհամակարգերի կայուն և արդյունավետ օգտագործմանն ուղղված միջոցառումները: Կարևորվել է բնակչության դերը և նշանակությունը նշված հիմնահարցերի լուծման ուղղությամբ:

«Սևան» ազգային պարկ» ՊՈԱԿ-ի Այցելուների կենտրոնը իրականացրել է մի շարք միջոցառումներ սեմինարների, քննարկումների, ուսումնասիրությունների, տեղեկությունների տրամադրման միջոցով: Իրականացվել են նաև հետևյալ հեռավար միջոցառումները.

1. «Գլոբալ տաքացումը և դրա հետևանքները Սևանա լճի վրա» թեմայով քննարկում –բանավեճ:

2. Միջոցառում «Կանաչ բուսականություն և ոչ երաշտին» ուսուցողական դասընթաց. նպատակը՝ երեխաների շրջանում բույսերի նկատմամբ սիրո և խնամքի սերմանումը:

3. «Սևան» ազգային պարկի կենդանիների անհետացումը, Կարմիր գրքի վերաբերյալ ուսուցողական դասընթաց. նպատակը՝ ծանոթություն Կարմիր գրքի հետ:

4. «Ծառերը մեր թթվածինն են» ուսուցողական քննարկում. նպատակը՝ շրջապատող անտառների նկատմամբ պատասխանատվության բարձրացումը:

5. «Անտառները երկրագնդի թոքերն են» բանավեճ-քննարկում. նպատակը՝ պահպանել ծառերը և չհատել դրանք:

6. Հեռավար աշխատանք «Սևանա լիճը», «Սևանա լճի ձկնատեսակները», «Տառեղների ընտանիք» , «Ամենագեղեցիկ թռչուններ», «Կարմիր բադ», «Մոխրագույն տառեղ», «Թուրաջ» թեմաներով:

1-ին եռամսյակում Այցելուների կենտրոն է այցելել շուրջ 600 այցելու:

- **Ընդհանուր բաժին**.

2021 թվականի առաջին եռամսյակում «Սևան» ազգային պարկ» ՊՈԱԿ է մուտքագրվել 707 գրություն, որից 203-ը շրջակա միջավայրի նախարարությունից, 504-ը՝ այլ իարավաբանական և ֆիզիկական անձանցից: Ելքագրվել է 1303 գրություն, որից 95-ը՝ շրջակա միջավայրի նախարարություն:

Գործավարության կարգին համապատասխան ստացված գրություններն ու նամակները ժամանակին և պատշաճ ձևով մուտքագրվել են գրանցամատյաններում, այնուհետև հանձնվել են տնօրենին՝ մակագրության: Մակագրված գրությունները հանձնվել են համապատասխան բաժիններ: Իրականացվել է հսկողություն դրանց՝ սահմանված ժամկետներում պատասխանելու համար:

2021 թվականի առաջին եռամսյակում «Սևան» ազգային պարկ» ՊՈԱԿ-ում աշխատանքի է ընդունվել 18 մարդ, ազատվել է 13 մարդ, իր ամենամյա նվազագույն արձակուրդից օգտվել է 36 աշխատակից:

- Իրավաբանների կողմից 2021թ. առաջին եռամսյակի ընթացքում կատարվել են հետևյալ աշխատանքները.

1. ՀՀ ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարաններ են ներկայացվել՝

- 1 հայցադիմում գումարի բռնագանձման պահանջով, 3 հայցադիմումներ գումարի բռնագանձման և պայմանագիրը միակողմանի վաղաժամկետ լուծելու պահանջներով, 1 հայցադիմում պայմանագիրը լուծելու պահանջով:
- Վճարման կարգադրություն արձակելու մասին 3 դիմում՝ գումարի բռնագանձման պահանջով,
- Դատարան է ներկայացվել 1 հայցադիմումի պատասխան.
- Դատարանի «Ապացույց պահանջելու մասին» որոշման պահանջի հիման վրա դատարան է ուղարկվել թվով 6 տեղեկատվություն.
- 3 դիմում կատարողական թերթը հարկադիր կատարումն ապահովող ծառայություն ներկայացնելու մասին:
- 1 դիմում հայցային վաղեմություն կիրառելու մասին:

2. Վարձավճարները ուշացնելու համար 35 վարձակալների ներկայացվել են հողամասի վարձակալության և /կամ/ կառուցապատման իրավունքի տրամադրման մասին պայմանագրերը միակողմանի, վաղաժամկետ լուծելու առաջարկներ:

3. ՀՀ ոստիկանության համապատասխան բաժիններ են ներկայացվել ՊՈԱԿ-ի աշխատակիցների կողմից կազմված իրավախախտումների վերաբերյալ 2 արձանագրություններ՝ համապատասխան ընթացք տալու համար:

4. ՀՀ ոստիկանության անձնագրային և վիզաների վարչություն ուղարկվել է գրություն 9 հողօգտագործողների հաշվառման մասին տեղեկատվություն տրամադրելու վերաբերյալ:

5. Պատասխանվել է թվով 66 գրությունների (դիմումների):

6. Հողի նկատմամբ վարձակալության /կառուցապատման իրավունք ունեցողներին 31.03.2021թ. դրությամբ պարտքի մասով ուղարկվել են թվով 782 ծանուցագրեր:

- **Տնտեսագիտական և տնտեսական սպասարկման բաժին.**

«Սևան» ազգային պարկ» ՊՈԱԿ-ի տնտեսագիտական և տնտեսական սպասարկմա բաժնի կողմից 2021թ. առաջին եռամսյակի ընթացքում իրականացվել են հետևյալ աշխատանքները.

1. Ստորաբաժանումներին է տրամադրվել դիզելային վառելիք, բենզին, գազ, տնտեսական ապրանքներ և գրենական պիտույքներ:

2. Իրականացվել են շենք-շինությունների և հարակից տարածքների մաքրման աշխատանքներ:

3. Իրականացվել է տրանսպորտային միջոցների աշխատանքի, վառելիքի և քսայուղերի շարժի հաշվառում:

4. Ապահովվել է խմելու ջրի, բնական գազի և էլեկտրաէներգիայի սպառման սարքավորումների անխափան աշխատանքը:

5. Տրանսպորտային միջոցների մասին կազմվել են թերությունների ակտեր, տեխնիկական բնութագրեր և ներկայացվել են համապատասխան գնման ընթացակարգեր կազմակերպելու համար:

9. Կորոնավիրուսի հարուցած համավարակի դեմ կազմակերպվել է վարչական շենքի ախտահանում և անձնակազմը ապահովվել է դիմակներով և ախտահանիչ նյութերով:

10. Կատարվել է թվով 6 ավտոմեքենաների տեխնիկական զննություն:

- 2021 թվականի առաջին եռամսյակի համար, համաձայն շրջակա միջավայրի նախարարության և «Սևան» ազգային պարկ» ՊՈԱԿ-ի միջև կնքված N ՇՄՆ-ԴՇ-21/03 պայմանագրի, պարկի պահպանության, պարկում գիտական ուսումնասիրությունների, անտառտնտեսական աշխատանքների կատարման ծառայությունների համար 2021թ. համար որպես դրամաշնորհ ՊՈԱԿ-ին տրամադրվել է 94097.700 հազար դրամ, որը փաստացի ծախսվել է ՊՈԱԿ-ի աշխատակիցների աշխատավարձի վարձատրության համար:

**2. Պարկի տարածքում գիտական հետազոտություններ.**

**-Գիտական հետազոտությունների, մշտադիտարկման և կադաստրի վարման բաժնի աշխատակիցների կողմից գիտական հետազոտությունների իրականացում.**

2021թ. առաջին եռամսյակում հիդրոկենսաբանի կողմից ուսումնասիրվել է Սևանա լիճ թափվող Ձկնագետ և Դրախտիկ գետերի տարբեր հատվածների ջրերում 20$^0$C-ում և 37$^0$C-ում աճող սապրոֆիտ մանրէների քանակը, կոլի-ինդեքսը (լակտոզադրական աղիքային ցուպիկների քանակը 1լ. ջրում), ինչպես նաև լուծված թթվածնի և օրգանական նյութի (պերմանգանատային օքսիդացում) պարունակությունը:

Մանրէաբանական հետազոտությունների արդյունքներից ելնելով կատարվել է գետերի ջրերի որակի էկոլոգասանիտարական գնահատում:

Հարկ է նշել, որ փորձանմուշները վերցվել են եղանակային վատ պայմաններում, գարնանանային ակտիվ վարարումների շրջանում: Գետերի ջրերը եղել են պղտոր, պայմանավորված նրանով, որ ջրի արագ հոսքը քշում է ոչ միայն հունի մասնիկները, այլև հալոցքային ջրերի հետ բերած կախված նյութեր և միկրոօրգանիզմներ:

**Գետ Ձկնագետ**

**Ակունք** – կատարված մանրէաբանական հետազոտությունների արդյունքում պարզվել է, որ գետի ակունքի ջրերում 20$^0$C-ում և 37$^0$C-ում աճող սապրոֆիտ մանրէների քանակը համապատասխանաբար կազմել է 7000 ԳԱՄ/մլ և 170 ԳԱՄ/մլ, իսկ կոլի-ինդեքսը՝ 0.6 հազ. ԳԱՄ/լ: Դիտակետի ջրերում լուծված թթվածնի պարունակությունը կազմել է 10.7 մգ$O_2$/դմ$^3$, իսկ պերմանգանատային օքսիդացման արժեքը՝ 6.9 մգO/դմ$^3$ (աղ.1):

Սապրոֆիտ մանրէների քանակը, կոլի-ինդեքսը, լուծված թթվածնի պարունակությունը և պերմանգանատային օքսիդացման արժեքը Ձկնագետ գետի տարբեր հատվածների ջրերում
24.03.2021թ.

**Աղյուսակ 1**

| Դիտակետ | Սապրոֆիտ մանրէների քանակ, ԳԱՄ/մլ | Կոլի-ինդեքս, հազ. | Լուծված թթվածին, մգ$O_2$/դմ$^3$ | Պերմանգանատային օքսիդացում, |
|---|---|---|---|---|

| | 20°C | 37°C | ԳԱՄ/լ | | մգ O/դմ$^3$ |
|---|---|---|---|---|---|
| Ակունք | 7000 | 170 | 0.6 | 10.7 | 6.9 |
| Սեմյոնովկա համայնքի անասնապահական հոսքաջրերի մուտքից մոտ 50 ներքև | 60000 | 3000 | 20 | - | 11 |
| Գետաբերան | 50000 | 2700 | 90 | 9.0 | 7.8 |

**Սեմյոնովկա համայնքի անասնապահական հոսքաջրերի մուտքից մոտ 50մ ներքև –** հոսքաջրերը, լցվելով գետ, այն ենթարկում են աղտոտման, ինչի արդյունքում ակունքի համեմատ արձանագրվել է մանրէների թվաքանակի աճ և պերմանգանատային օքսիդացման բարձր արժեք: Այսպես, 20$^0$C-ում և 37$^0$C-ում աճող սապրոֆիտ մանրէների քանակը համապատասխանաբար կազմել է 60000 ԳԱՄ/մլ և 3000 ԳԱՄ/մլ, իսկ կոլի-ինդեքսը՝ 20 հազ. ԳԱՄ/լ: Պերմանգանատային օքսիդացման արժեքը եղել է 11 մգ O/դմ$^3$:

**Գետաբերան -** նախորդ դիտակետի համեմատ արձանագրվել է սապրոֆիտ մանրէների թվաքանակի և օրգանական նյութի պարունակության նվազում: Այսպես, 20$^0$C-ում և 37$^0$C-ում աճող սապրոֆիտ մանրէների քանակը համապատասխանաբար կազմել է 50000 ԳԱՄ/մլ և 2700 ԳԱՄ/մլ, իսկ պերմանգանատային օքսիդացման արժեքը՝ 7.8 մգ O/դմ$^3$: Լուծված թթվածնի պարունակությունը կազմել է 9.0 մգ$O_2$/դմ$^3$: Դիտակետում աղիքային ցուպիկների խմբի մանրէների քանակը ավելացել է՝ կազմելով 90 հազ.ԳԱՄ/լ:

**Գետ Դրախտիկ**

**Դրախտիկ գյուղից մոտ 100մ վերև-** կատարված հետազոտությունների արդյունքում պարզվել է, որ գետի այս հատվածի ջրերում 20$^0$C-ում և 37$^0$C-ում աճող սապրոֆիտ մանրէների քանակը համապատասխանաբար կազմել է 10000 ԳԱՄ/մլ և 410 ԳԱՄ/մլ: Դիտակետում աղիքային ցուպիկների խմբի մանրէներ չեն հայտնաբերվել: Պերմանգանատային օքսիդացման արժեքը կազմել է 6.4 մգ O/դմ$^3$ , իսկ լուծված թթվածնի պարունակությունը՝ 10.4 մգ$O_2$/դմ$^3$ (աղ.2):

**Աղյուսակ 2**

Սապրոֆիտ մանրէների քանակը, կոլի-ինդեքսը, լուծված թթվածնի պարունակությունը և պերմանգանատային օքսիդացման արժեքը Դրախտիկ գետի տարբեր հատվածների ջրերում
24.03.2021թ.

| Դիտակետ | Սապրոֆիտ մանրէների քանակ, ԳԱՄ/մլ | Կոլի-ինդեքս, հազ. | Լուծված թթվածին, մգ$O_2$/դմ$^3$ | Պերմանգանատային օքսիդացում, |
|---|---|---|---|---|

| | 20°C | 37°C | ԳԱՄ/լ | | մգ O/դմ$^3$ |
|---|---|---|---|---|---|
| Դրախտիկ գյուղից մոտ 100մ վերև | 10000 | 410 | - | 10.4 | 6.4 |
| Գետաբերան | 50000 | 4000 | 32 | 9.5 | 10.9 |

**Գետաբերան** –գետը, հոսելով Դրախտիկ համայնքի միջով, աղտոտվում է ֆեկալ-տնտեսական և անասնապահական հոսքաջրերով, որի հետևանքով վերցված փորձանմուշում նախորդ դիտակետի համեմատ արձանագրվել է մանրէների քանակական աճ և պերմանգանատային օքսիդացման բարձր արժեք: Այսպես, 20$^0$C-ում և 37$^0$C-ում աճող սապրոֆիտ մանրէների քանակը կազմել է 50000 ԳԱՄ/մլ և 4000 ԳԱՄ/մլ, իսկ կոլի-ինդեքսը՝ 32 հազ. ԳԱՄ/լ: Պերմանգանատային օքսիդացման արժեքը կազմել է 10.9 մգ O/դմ$^3$, իսկ լուծված թթվածնի պարունակությունը՝ 9.5 մգ $O_2$/դմ$^3$ :

Այսպիսով, ելնելով մանրէաբանական ցուցանիշների (20$^0$C-ում աճող սապրոֆիտ մանրէների քանակ, կոլի-ինդեքս) ստացված արդյունքներից՝ հետազոտված գետերի տարբեր հատվածների ջրերը, համաձայն Ռոմանենկոյի (Романенко и др., 1990) մակերևութային ջրի որակի էկոլոգասանիտարական գնահատման, դասվում են.

**Գետ Ձկնագետ**

- Ակունք՝
  ըստ սապրոֆիտ մանրէների քանակի՝ չափավոր աղտոտված կարգի,
  ըստ կոլի-ինդեքսի՝ բավական մաքուր կարգի
- Սեմյոնովկա համայնքի անասնապահական հոսքաջրերի մուտքից մոտ 50 ներքև՝
  ըստ սապրոֆիտ մանրէների քանակի՝ խիստ աղտոտված կարգի,
  ըստ կոլի-ինդեքսի՝ չափավոր աղտոտված կարգի
- գետաբերան՝
  ըստ սապրոֆիտ մանրէների քանակի՝ խիստ աղտոտված կարգի
  ըստ կոլի-ինդեքսի՝ ուժեղ աղտոտված կարգի

**Գետ Դրախտիկ**

- Դրախտիկ գյուղից մոտ 100մ վերև՝
  ըստ սապրոֆիտ մանրէների քանակի՝ ուժեղ աղտոտված կարգի,
- գետաբերան՝
  ըստ սապրոֆիտ մանրէների քանակի՝ խիստ աղտոտված կարգի:
  ըստ կոլի-ինդեքսի՝ չափավոր աղտոտված կարգի:

Համաձայն Ամբրազենի (Амбразене, 1974) դասակարգման, ըստ 37°C-ում աճող սապրոֆիտ մանրէների քանակի ( մանրէների ընդհանուր թիվ), հետազոտված գետերի տարբեր հատվածների ջրերը դասվում են.

**Գ.Ձկնագետ**

- Ակունք՝ մաքուր դասին,

- Սեմյենովկա համայնքի անասնապահական հոսքաջրերի մուտքից մոտ 50մ ներքև՝ չափավոր աղտոտված դասին,
- Գետաբերան՝ չափավոր աղտոտված դասին:

**Գ.Դրախտիկ**

- Դրախտիկ համայնքից մոտ 100 մետր վերև՝ թույլ աղտոտված դասին,
- Գետաբերան՝ չափավոր աղտոտված դասին:

**Ձկան և խեցգետնի պոպուլյացիաների ուսումնասիրություն մեծ Սևանում և փոքր Սևանում.**

2021թ. առաջին եռամսյակում ձկնաբանական ուսումնասիրություններ են իրականացվել Սևանա լճի Նորատուս, Հայրավանք, Դրախտիկ, Ջիլ համայնքների ջրային տարածքներում:

Հունվար ամսին Սևանա լճում կատարված ձկնաբանական հետազոտությունների ընթացքում սիգի ձևաչափական ուսումնասիրությունները ցույց են տվել, որ դեկտեմբեր-հունվար ամիսներին ձվադրած IV-V սեռահասունության փուլերում գտնվող սիգ տեսակի ձկների չափերը տատանվել են 31,0-36,0 սմ, կշիռը՝ 390,0-591,0 գրամ: Բտվածության միջին գործակիցը՝ F=1,27, K=1,12 (Մ. Սևան, Նորատուս):

Փոքր Սևանում՝ Հայրավանքի ջրային տարածքում ուսումնասիրվող ձկների չափերը տատանվել են 31,5-37,0 սմ, կշիռը՝ 330,0-558,0 գրամ: Բտվածության միջին գործակիցը՝ F=1,14, K=1,04:

Փետրվար ամսի դիտարկումները ցույց են տվել, որ Սևանա լճում ձվադրումն ավարտած սիգի վտառի հիմնական կուտակումներ առկա են փոքր Սևանի հյուսիս-արևելյան և հյուսիս-արևմտյան հատվածներում՝ Նորաշենի կղզիների մերձակայքում, Հայրավանք, Դրախտիկ համայնքների ջրային տարածքներում և մեծ Սևանի կենտրոնական հատվածում:

Ձկների կուտակման վայրերում ջրի ջերմաստիճանը տատանվել է 3,1$^{0}$C-ից (Մեծ Սևան) 3,8 $^{0}$C (փոքր Սևան): Մեծ Սևանում սիգի կուտակումները գրանցվել են 20-ից-35 մետր խորությունների վրա: Նույն ժամանակահատվածում, փոքր Սևանի հարավ-արևմտյան մասում՝ 15-20 մետր խորություններում:

Վերը նշված տարածքից հետազոտության է ենթարկվել սիգի 39 առանձնյակ: Ձկների երկարությունները տատանվել են 26,0-36,0 սմ, քաշը՝ 280,0-551,0 գրամ: Բտվածության ցուցանիշը՝ F=1,25, K=1,15: Սեռական արգասիքները գտնվել են հասունացման 3-րդ փուլում: Հետազոտված ձկները եղել են $1^{+}$ և $2^{+}$ տարեկան (փոքր Սևան, Դրախտիկ):

Մեծ Սևանում որսված սիգ տեսակի ձկների (19 առանձնյակ) միջին երկարությունը եղել է՝ 30,7 սմ, քաշը՝ 407,2 գրամ: Բտվածության ցուցանիշը՝ F=1,42, K=1,28 (Մեծ Սևան, Ջիլ):

Սիգի սննդառության առանձնահատկությունների ուսումնասիրությունները ցույց են տվել, որ ուսումնասիրվող 41 առանձնյակների աղեստամոքսային տրակտում

հանդիպել են թիոտանի խեցգետնակերպեր, կողալողեր, փափկամարմիններ: 6 առանձնյակների աղեստամոքսային տրակտում առկա է եղել 23-ից 48 հատ սիգի ձկնկիթ:

Սիգի միջին բեղունությունը ուսումնասիրվող ժամանակահատվածում կազմել է՝ 12115-26390 հատ ձկնկիթ:

Մարտ ամսին Սևանա լճում իրականացվել է խեցգետնային համակեցության էկոլոգիական հետազոտություններ: Ուսումնասիրություններ է կատարվել փոքր Սևանի Ծովագյուղ համայնքի ջրային տարածքում: Ձեռք բերված փորձանյութի մշակման արդյունքում ստացվել են պոպուլյացիայի չափատարիքային, սեռական կառուցվածքի և ֆիզիոլոգիական վիճակի մասին տվյալներ:

Սևանա լճում խեցգետնի վերարտադրման ընթացքի ուսումնասիրությունները ցույց են տվել, որ ձվադրման գործընթացը սկսվել է փետրվարի երկրորդ տասնօրյակից: Լճում խեցգետնի բեղմնավորված ձվերով էգեր հայտնաբերվել են մարտի սկզբին, երբ ջրի ջերմաստիճանը լճի հատակային շերտերում տատանվել է 2,1-2,3 $^{0}$C սահմաններում:

Ուսումնասիրվող տարածքում, որսաբաժնում արուների թվաքանակը գերակշռում է էգերի համեմատ: Արուների հարաբերակցությունը կազմում է մոտ 2:1: Այս հարաբերակցությունը վկայում է գարնանը արուների մեծ ակտիվության մասին:

Արուների ակտիվության և որսագործիքների ընտրողականության հետևանքով, թակարդների մեջ հիմնականում ընկնում են առավել ակտիվ կենդանիներ:

Ուսումնասիրվող ժամանակահատվածում խեցգետնի ձևաչափական ցուցանիշների հետազոտությունները ցույց են տվել, որ արու խեցգետինների միջին երկարությունը 10,1 սմ է, քաշը՝ 24,6 գրամ: Էգերի համար համապատասխանաբար ցուցանիշները՝ 10,3 սմ, քաշը՝ 27,8 գրամ (փոքր Սևան, Ծովագյուղ):

Տարիքային խմբերը կազմել են 3-5 տարեկան խեցգետինները: Խորությունների ընտրությունը կատարվել է հաշվի առնելով խեցգետնի տարածվածության սահմանները: Ուսումնասիրության արդյունքներից ելնելով կարելի է եզրակացնել, որ վերարտադրման և որսաչափերի ցուցանիշների համաձայն պոպուլյացիան գտնվում է բավարար վիճակում:

**-Էկոհամակարգերի և դրանց բաղադրիչների գույքագրում, հաշվառում և մոնիթորինգ.**

Մարտի 25-ից սկսվել է Սևանա լճում սիգ ձկնատեսակի արդյունագործական ձկնորսության 2-րդ փուլի համար նախատեսված 250 տ չափաքանակի հայտերի և դիմումների ընդունումը «Սևան» ազգային պարկ» ՊՈԱԿ-ում և 5 մասնաճյուղերում, որը շարունակվելու է մինչև ապրիլի 8-ը:

Շարունակվել են «Սևան» ազգային պարկ» ՊՈԱԿ-ի և հողօգտագործողների միջև կնքված պայմանագրերի արխիվային փաստաթղթերի տվյալների թարմացման և թվայնացման աշխատանքները: Թվայնացվել են 110 հողօգտագործողների պայմանագրերի փաթեթներ և վերակնքվել են 2 պայմանագրեր: Կատարված

փոփոխությունների վերաբերյալ ուղղումներ են կատարվել տվյալների բազայում: Կատարվել է հողամասերի 15 իրավատերերի և տվյալների փոփոխություն:

Ամփոփվել են «Սևան» ազգային պարկ» ՊՈԱԿ հողօգտագործողների կողմից ներկայացրած տարբեր խնդրանքներով դիմումները (ներդրումային ծրագրեր իրականացնելու, հողամասը օտարելու, նոր պայմանագրեր կնքելու, հողամասը ենթավարձակալությամբ տրամադրելու, գույքի բաժանում կատարելու և այլն)՝ «Սևան» ազգային պարկ» ՊՈԱԿ-ի խորհրդի նիստում քննարկելու և ընթացք տալու համար:

Կազմվել են «Սևան» ազգային պարկի հողամասերը վարձակալությամբ և/կամ կառուցապատման իրավունքով տրամադրելու 18 մրցույթային փաթեթներ և ներկայացվել են շրջակա միջավայրի նախարարություն:

**3. Պարկի տարածքում անտառտնտեսական աշխատանքներ.**

❖ **Մասնաճյուղերի կողմից անհրաժեշտությամբ պայմանավորված անտառգիտական և անտառտնտեսական միջոցառումներ, սանիտարական հատումներ և խնամքի աշխատանքներ.**

«Սևան» ազգային պարկ» ՊՈԱԿ-ի մասնաճյուղերում բնափայտի մթերման ծավալները հաստատելու մասին ՊՈԱԿ-ի տնօրենի 2020թ. հոկտեմբերի 19 N551-Լ հրամանի համաձայն 2020թ. հոկտեմբերին սկսված սանիտարական հատման աշխատանքների ժամկետները սահմանված են եղել մինչև 2020թ. դեկտեմբերի 29-ը, սակայն Նորատուսի, Սևանի և Վարդենիսի մասնաճյուղերն աշխատանքները այդ ժամկետում չեն հասցրել ավարտին: Մասնաճյուղերի տնօրենների զեկուցագրերի հիման վրա «Սևան» ազգային պարկ» ՊՈԱԿ-ի տնօրենի 2020թ. դեկտեմբերի 28-ի N 648-Լ հրամանով մթերման և արտահանման ժամկետները երկարաձգվել են մինչև 2021թ. փետրվարի 26-ը: Վարդենիս և Սևան մասնաճյուղերի աշխատանքները ավարտել են փետրվարի 26-ին, իսկ Նորատուս մասնաճյուղը 000161 անտառհատման տոմսով նախատեսված աշխատանքները, եղանակային պայմաններից ելնելով, չի հասցրել ավարտել: Որոշում է կայացվել թվով 591 հատ սոճի տեսակի սանիտարական հատման ենթակա ծառերի (2.73 մ$^3$ շինափայտ, 35.28 մ$^3$ վառելափայտ և 1.824 մ$^3$ ջախ ծավալով) հատումները իրականացնել 2021թ.-ին նախատեսվող սանիտարական հատումների ժամանակ:

Վերը նշված աշխատանքների արդյունքում 2021թ. առաջին եռամսյակի դրությամբ «Սևան» ազգային պարկ» ՊՈԱԿ-ի պահեստ է մուտքագրվել 1458.111 մ$^3$ վառելափայտ, 1027.295 մ$^3$ ջախ, 95.771 մ$^3$ շինափայտ և իրացվել է 1308.892 մ$^3$ վառելափայտ, 931.248 մ$^3$ ջախ, 78.355 մ$^3$ շինափայտ:

«Սևան» ազգային պարկ» ՊՈԱԿ-ի և քաղաքացի Արմեն Թովմասյանի միջև 2021թ. փետրվարի 1-ին կնքվել է Սևանա լճի ափամերձ անտառտնկարկների մաքրման աշխատանքների կատարման թիվ 21-01 պայմանագիրը Արտանիշ մասնաճյուղի Դրախտիկ տեղամասի 2-րդ քառակուսում 0,48 հա մակերեսով տարածքի համար (8,991 մ$^3$ փայտանյութ): Պայմանագրի ժամկետը ավարտվում է 2021թ. ապրիլի 25-ին:

Համաձայն «ՀԿԵ» ՓԲԸ-ի 04.02.2021թ. N Э-80 գրության և շրջակա միջավայրի նախարարի տեղակալի 2021թ. մարտի 2-ի N Ն/16.10/1114 հանձնարարականի «Հարավկովկասյան Երկաթուղի» ՓԲԸ-ի թույլատրվել է բարձր լարման էլ. գծերի տակ Սևան մասնաճյուղի Ախթամար տեղամասի 20,21 քառակուսիների հատվածում հատել խոչընդոտող ճյուղեր 0,9 մ$^3$ ծավալով: Աշխատանքների ավարտը նախատեսվում է 2021թ. ապրիլի 5-ը:

Հաշվետու ժամանկաահատվածում կազմվել է Սևան ազգային պարկի անտառային տարածքների 2021թ. հրդեհների արձագանքման պլան և ներկայացվել է ՀՀ Գեղարքունիքի մարզպետի և ՀՀ ԱԻՆ ՓԾ Գեղարքունիքի ՄՓՎ պետի համաձայնեցմանը:

«Սևան» ազգային պարկ»
ՊՈԱԿ-ի տնօրենի ժ/պ Ա. Աբելյան